ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

11478 11 DEC 2019

ժամ

11 դեկտեմբեր 2019թ. No 3719 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 2-ի 58-րդ կետի, Վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 728-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 18-րդ կետի «20» ենթակետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի N 0103159919 առ 29.11.2019թ. հետգրանցումային փոփոխությունների փորձագիտական եզրակացությունները,

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1.Ընդունել 7 դեղի հավաստագրի վերաձևակերպում պահանջող հետգրանցումային փոփոխություններն՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Զ. Դարբինյանին՝ նախարարի հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ին:

3.«Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Լ.Մելիքյանին՝

1) Սույն հրամանը հրապարակել օրենքով սահմանված կարգով:

2) 3 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի վերաձևակերպված հավաստագրերի ներկայացումը Առողջապահության նախարարությանը:

3) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցամատյանում լրամշակման կատարումը՝ նշելով փոփոխության տիպը և ընդունման ամսաթիվը:

4. Առողջապահության նախարարության դեղորայքային քաղաքականության և բժշկական տեխնոլոգիաների վարչության պետ Վ. Գրիգորյանին՝

1) 2 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել դեղերի վերաձևակերպված հավաստագրերի ներկայացումը նախարարի հաստատմանը և տրամադրել Փորձագիտական կենտրոնին:

5.Սույն հրամանն ուժի մեջ մտնելու պահից հինգ աշխատանքային օրվա ընթացքում ապահովել հավելվածում նշված դեղերի վերաձևակերպված հավաստագրերի տրամադրումը հայտատուներին:

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

11.12.2019

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հավելված
Հայաստանի Հանրապետության
առողջապահության նախարարի
2019թ. դեկտեմբերի 11- ի N 3719 – Ա հրամանի

ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ

**ՀԵՏԳՐԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ ՀԱՄԱՁԱՅՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ N 162-Ն ԱՌ 28.02.2019 ՈՐՈՇՄԱՆ**

| Հ/Հ | Փոփոխության տեսակ | Առևտրային անվանում | Միջազգային չպատենտավորված (ջեներիկ) կամ ակտիվ բաղադրատարրերի անվանումներ | Դեղաձև | Դեղաչափը և թողարկման ձև (փաթեթավո-րում) | Արտադրող ֆիրման | Երկիր | Գրանցման հավաստագրի իրավատերը | Երկիր | Բացթողման կարգ | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | *IA և IB* | Լիվարոլ | կետոկոնազոլ | մոմիկներ հեշտոցային | 400մգ; (5/1x5/) և 10(2x5) | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603950, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | Դ | 15381/1/1 29.11.2019 |
| 2. | *IA* | Սկոպրիլ պլյուս | լիզինոպրիլ (լիզինոպրիլի դիհիդրատ), հիդրոքլորոթիազիդ | դեղահատեր | 20մգ+12,5մգ; (20/2x10/) և (30/3x10/) բլիստերում | Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Ալկալոիդ ԱԴ Սկոպյե, Բլվդ. Ալեկսանդար Մակեդոնսկի 12, 1000, Սկոպյե | Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն | Դ | 17412/1/1 29.11.2019 |
| 3. | *IA և IB* | Օտոֆիքս 40մգ/գ+10մգ/գ ականջակաթիլներ,լուծույթ | ֆենազոն, լիդոկային (լիդոկայինի հիդրոքլորիդ) | ականջակաթիլներ (լուծույթ) | 40մգ/գ+10մգ/գ ; 15մլ ապակե շշիկ և կաթոցիկ ներդրուկ | Սոֆարմա ԲԸ, Տրայկո Ստանոեվ փ. 3, Սոֆիա 1797 | Բուլղարիա | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | Բուլղարիա | ԱԴ | 15626/1/1 29.11.2019 |
| 4. | *IA և IB* | Սուլկոսերիլ | արյունատրամալուծիչ հորթի արյունից սպիտակուցազերծ, պոլիդոկանոլ | մածուկ դենտալ | 2,125մգ/գ+10մգ/գ; 5գ ալյումինե պարկուճ | Լեգասի Ֆարմասյուտիկալս Սուիտզերլանդ ԳմբՀ, Ռուհրբերգշտր | Շվեյցարիա | ՄԵԴԱ Ֆարմասյուտիկալս Սուիտզերլանդ ԳմբՀ, Հեգնաուշտրասե 60, 8602 Վանգեն- | Շվեյցարիա | ԱԴ | 14321/1/1 29.11.2019 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | ասե 21, 4127 Բիրսֆելդեն | | Բրուտիսելեն | | | |
| 5. | *IA և IB* | Կլայրա | I դեղահատ՝մուգ դեղին – էստրադիոլ (էստրադիոլ վալերատ), II դեղահատ՝վարդագույն – էստրադիոլ (էստրադիոլ վալերատ), դիենոգեստ, III դեղահատ՝ բաց դեղին- էստրադիոլ (էստրադիոլ վալերատ), դիենոգեստ, IV դեղահատ՝ կարմիր-էստրադիոլ (էստրադիոլ վալերատ), V դեղահատ՝սպիտակ-ինակտիվ | դեղահատեր թաղանթապատ | 3մգ+(2մգ+2մգ)+(2մգ+3մգ)+1մգ; (28/1x28/(2-I դեղահատ)(5-II դեղահատ)/(17-III դեղահատ)(2-IV դեղահատ)(2-V դեղահատ)/), բլիստերում | Բայեր Վեյմար ԳմբՀ և Քո. ԿԳ, Դոբերեյներշտրասե 20, 99427 Վեյմար | Գերմանիա | Բայեր ԱԳ, Կայզեր-Վիլհելմ-Ալե 1, 51373 Լևերկուզեն | Գերմանիա | Դ | 15365/1/1 29.11.2019 |
| 6. | *IA, IB և II* | Մեքսիդոլ | էթիլմեթիլհիդրօքսիպիրիդինի սուկցինատ | լուծույթ ն/ե և մ/մ ներարկման | 50մգ/մլ; (5/1x5/) ամպուլներ 5մլ բլիստերում | ՖԿՊ "Արմավիրսկայա բիոֆաբրիկա", 352212, Կրասնոդար շրջան, Նովոկուբանսկի մարզ, Պրոգրեսս գ., Մեչնիկովի փ., 11 շ. | Ռուսաստան | ՍՊԸ "ՆՊԿ "ՖԱՐՄԱՍՈՖՏ", 115407, Մոսկվա, Սուդոստրոիտելնայա փողոց , տ. 41, 1-ին հարկ, տարածք 12 | Ռուսաստան | Դ | 17422/1/1 29.11.2019 |
| 7. | *IA, IB և II* | Մեքսիդոլ | էթիլմեթիլհիդրօքսիպիրիդինի սուկցինատ | լուծույթ ն/ե և մ/մ ներարկման | 50մգ/մլ; (10/2x5/) ամպուլներ 2մլ | ՖԿՊ "Արմավիրսկայա բիոֆաբրիկա", 352212, | Ռուսաստան | ՍՊԸ "ՆՊԿ "ՖԱՐՄԱՍՈՖՏ", 115407, Մոսկվա, Սուդոստրոիտելնայա փողոց , տ. 41, 1-ին | Ռուսաստան | Դ | 17423/1/1 29.11.2019 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | բլիստերում | Կրասնոդար շրջան, Նովոկուբանսկի մարզ, Պրոգրես գ., Մեչնիկովի փ., 11 շ. | | հարկ, տարածք 12 | | | |